

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

ՄԵԿ ՍԻՐՏ, ՄԵԿ ՀՈԳԻ, ՄԵԿ ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆ

Ամենայն Հայոց Վազգեն Ա Վեհափառ Հայրապետը իր գահակալության տարիներին բազմիցս և տարբեր առիթներով արտասանել է այս բառերը որպես կոչ ու պատգամ, իբրև ցանկություն ու գալիքի առհավատչյա: Սակայն վերջին մեկուկես տարում ամենուրեք՝ Հայաստանում, Սփյուռքում թե Խորհրդային Միության հայաշատ կենտրոններում այս բառերը հնչում են ավելի կենսական շեշտով, իմաստավորվում իրական բովանդակությամբ, հույսի ծիլեր արձակում՝ դառնալու համար հայ հավաքականության կենսաձև:

Միասնություն և միավորում արտահայտող բառեր արցախյան շարժման հետ հետզհետե դարձան ամենօրյա՝ դառնալով հոգեկան անհրաժեշտություն, համազգային կեցվածք: Հետո պատահեց մահասփյուռ աղետը՝ դաժան ավելի քան տարերքը, ավերիչ ավելի քան կործանումը ինքը: Այդ մեծ արհավիրքը հայությամբ միավորեց աշխարհի բոլոր բարի կամքի տեր մարդկանց և պետություններին: Եվ բնականաբար, առաջին հերթին ուշքի բերեց հայ ժողովրդին՝ վերիմաստավորելու համար իր ազգային ինքնությունը, իր ճակատագիրը, իր առաքելությունը, ծանր դժվարություններն ու տագնապները հաղթահարելու կամեցողությունը:

ՄԵԿ ՍԻՐՏ

Եթե մեկ է սիրտը, ուրեմն պիտի բաբախի համաչափ՝ մարմնի բոլոր անդամներին բաշխելով նույնեռանդ արյուն և մարմնի բոլոր անդամներից ընդունելով համակամ գործունեություն:

Այս էր մեր ժողովրդի, մանավանդ մեր Եկեղեցու անցյալին իր քընանխույզ հայացքը սևեռած երիտասարդ, եռանդուն Վազգեն Ա Կաթողիկոսի մտասևեռումը: Անհասկանալի էին Եկեղեցու մարմնի անդամների տարընթ-

թացությունը, առավել ևս անցյալում դժգույն հետք թողած և վաղվա հորիզոնին բիծ կանխագուշակող հակադրությունները: Ամենայն Հայոց Նորընտիր Կաթողիկոսը ունկնդրեց Մեկ սրտի բաբախյունին. կային տարամետ հնչյուններ, անհարազատ ձայներ, բայց միշտ ելակետ ու հանգուցակետ հայտարարեց մեկ սիրտը: Որքան նյարդ ու տագնապ, ի զուր վատնված եռանդ ու կորով արժեց այդ բոլորը և՛ Ամենայն Հայոց Կաթողիկոսին, և՛ սփյուռքահայությանը: Սակայն Վեհափառ Հայրապետը հետևողական գտնվեց իր ջանքերի մեջ, տագնապեց, բայց չհուսալքվեց. եղավ Երուսաղեմի ողջագուրումը, եղան պատվիրակությունների հանդիպումներն ու համատեղ հաղորդագրությունները և հետզհետե սառույցը սկսեց հալվել: Մեծի Տանն Կիլիկիո Հարեգին Բ Կաթողիկոսը ցուցաբերեց Վազգեն Ա Վեհափառի ջանքերի եղբայրական հասկացողություն, լսեց Նորին Սրբության՝ ազգի վաղվա օրվա համար տագնապող սրտի կանչն ու ժամանակի հրամայականը և ընդառաջեց Ամենայն Հայոց Հայրապետի հրավերին՝ լինելու համար Մեծի Տանն Կիլիկիո առաջին կաթողիկոսը, որ պատարագ մատուցեց Միածնաէջ Մայր Տաճարի ս. Սեղանի առաջ: Ու ահագնացավ հույսը, որ սիրտը հետզհետե կբաբախի համաչափ ու համահունչ:

ՄԵԿ ՀՈԳԻ

Եթե մեկ է հոգին, ուրեմն նույն պարարտ հողի վրա է ընկել աստվածային շնորհը, և ազգը աշխարհին կբաշխի իր հոգու պարգևները և աշխարհը կընկալի հոգու նույն թրթիռներով:

Դարերով եղել է մեկ հոգի ու մեկ հոգու միևնույն արտահայտություն՝ մեկ մշակույթ, հարուստ հոգևոր արժեքներ, Սուրբ Հոգու շնորհները շնորհընկալ ժողովրդին բաշխող մեկ Մայր Եկեղեցի:

Էջմիածնի լույսը տարասփռվում էր Հայաստանից շատ հեռու, հեռավոր արևների տակ ապրող հայ մարդու հոգու մեջ, ջերմացնում պատմական այլևայլ դաժան հանգամանքների բերումով հայրենի տունն ու գյուղի հարազատ եկեղեցին լքած հայու հոգին՝ դառնալով շաղախ՝ ամրակապելու համար տարբեր դարերում աշխարհով մեկ սփռված հայության ոգին ու ստեղծագործական եռանդը Մայր Հայրենիքին:

Ազգընտիր գահակալը հիսունական թվականների վերջերից չխնայեց ջանք ու եռանդ, միտք ու հնարամտություն՝ հայի հոգին դարձնելու միահամուռ ու աննկուն: Պետականությամբ հաստատուն իրական հայրենիքով և գալիքի տեսիլքով խանդավառեց ամենուրեք, ուր եղավ հովվապետական այցելությամբ երկրե-երկիր ու մայր ցամաքից մայր ցամաք: Ապավինեց անցյալի ստեղծագործ ոգուն՝ որպես ճարտարապետություն ու մատենագրություն, երաժշտություն ու քանդակ, փիլիսոփայություն ու աշխարհայացք, զինվեց լավատեսությամբ ու այդ լավատեսությունը դարձրեց հույս և որպես Սուրբ Հոգու շնորհ փչեց ամեն հայ երդիքի տակ, բոլոր հայերի հոգիները շաղախեց այդ մեկ հոգիով: Եղան նաև ընկրկումի պահեր, բայց մեկ հոգիի տեսիլքը միշտ ուժ ու ապավեն դարձավ և երաշխիք՝ վաղվա արդար դատի ու համազգային պայծառ գալիքի: Նորին Սրբությունը հավատաց այդպես, և այդ հավատքը դարձավ մեր ժողովրդի վերջին տարիների ինքնագիտակցության և ինքնահաստատման աղբյուրը:

ՄԵԿ ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆ

Եթե մեկ է սիրտը ու մեկ է հոգին, ուրեմն և մեկ է առաքելությունը:

Շուտով արդեն 17 դար Հայաստանյայց Առաքելական Եկեղեցին սպասավորում է մեր ժողովրդին իր առաքելության բարձր գիտակցությամբ: Եղել է և՛ «ծառաս բարի» և՛ «հովիվ քաջ»: Երբեմն նույնիսկ թվում է թե գերմարդկային ճիգերով իրագործել է իր առաքելությունը գերազանցող պատասխանատվությունը սեփական ժողովրդի ճակատագրի առաջ. և իջել է մարտադաշտ՝ Ավարայրից մինչև Սարդարապատ ու ... երկրաշարժ, ուր ճիգերի գերագույն լարումով պայքարեց հայ ժողովրդի վերապրումին ի խնդիր:

Սփյուռքում Հայ Եկեղեցին, մանավանդ հետ եղեռնյան տարտղնված հայության սիրտն ու հոգին ամրապնդեց, ու դարձավ գոյության ապավեն: Հայրենիքում տագնապեց իր ժողովրդի տվայտանքներով ու կիսեց նույնիսկ արհամարհանքի ու աքսորի դառնությունը՝ Քրիստոսի պես, Քրիստոսի չարչարանքով, բայց ծունկի չեկավ ու չլքեց իր պատմությունն ու ժողովրդին:

Եվ ահա, փառք Աստուծո, եկել են բարենպաստ օրեր: Դժվար օրերը, թվում է, թե անցան: Մեծացել է Եկեղեցու գործունեության տեսադաշտը. մեկ առաքելությունը՝ էական ավելի քան երբեք. Սփյուռքում՝ հայապահպանման հյուծվող հույսը, Հայրենիքում՝ նորաբաց եկեղեցիներ, ժողովրդի հոգևոր ծարավ, բարեսիրական գործունեություն մինչև հիվանդանոց՝ ու բանտ:

Այո, ավելի քան երբեք այժմեական են հնչում ու հրամայական Ամենայն Հայոց Կաթողիկոսի խոսքերը՝ մեկ սիրտ, մեկ հոգի, մեկ առաքելություն: Առանց այդ մեկության ու միասնության անհնար կլինի բուժել մեր վերքերը, ցրել մեր տագնապները, հույս տածել մեր արդար սպասումների լուծման նկատմամբ ու հավատալ Հայոց գալիքին: